

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

\_\_\_\_\_ մարտի 2016թ.

N \_\_\_\_ - Ն

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով անկախ աուդիտոր «Հայաուդիտ» ՍՊԸ-ի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետին, 82-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1 - 5 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Երևան համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ  
(12/01/2015-30/12/2015թ. ժամանակահատվածի համար)**

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
			Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝		Ընդամենը (u.8+u.9)	այդ թվում՝		Ընդամենը (u.11+u.12)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1000	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ</b> (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝		71 870 838,3	71 766 701,9	3 050 470,0	70 618 885,8	70 514 749,4	3 091 954,0	76 561 620,2	76 464 700,3	3 056 362,5
1100	<b>1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b> (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում՝	7100	14 182 961,1	14 182 961,1	X	13 942 961,1	13 942 961,1	X	13 698 677,7	13 698 677,7	X
1110	<b>1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից</b> (տող 1111 + տող 1112) այդ թվում՝	7131	4 813 050,5	4 813 050,5	X	4 813 050,5	4 813 050,5	X	4 856 043,1	4 856 043,1	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		4 166 684,0	4 166 684,0	X	4 166 684,0	4 166 684,0	X	4 232 098,3	4 232 098,3	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		646 366,5	646 366,5	X	646 366,5	646 366,5	X	623 944,8	623 944,8	X
1120	<b>1.2 Գույքային հարկեր այլ գույքից</b> այդ թվում՝	7136	5 535 223,6	5 535 223,6	X	5 535 223,6	5 535 223,6	X	5 396 844,0	5 396 844,0	X
1121	Գույքահարկ փոխադրանքիցների համար		5 535 223,6	5 535 223,6	X	5 535 223,6	5 535 223,6	X	5 396 844,0	5 396 844,0	X
1130	<b>1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b> այդ թվում՝	7145	3 459 687,0	3 459 687,0	X	3 219 687,0	3 219 687,0	X	3 067 374,7	3 067 374,7	X
1131	Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+տող 1146+տող1147+տող 1148+տող 1149+տող 1150) այդ թվում՝	71452	3 459 687,0	3 459 687,0	X	3 219 687,0	3 219 687,0	X	3 067 374,7	3 067 374,7	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից՝		142 875,0	142 875,0	X	142 875,0	142 875,0	X	118 064,7	118 064,7	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		142 875,0	142 875,0	X	142 875,0	142 875,0	X	103 339,7	103 339,7	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0,0	0,0	X	0,0	0,0	X	14 725,0	14 725,0	X
1135	բ) Համայնքի վարչ. տարածքում շենքերի, շինություն-ի, քաղաքաշինական այլ օբյեկտ-ի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվ. չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		13 805,0	13 805,0	X	13 805,0	13 805,0	X	5 539,9	5 539,9	X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		11 100,0	11 100,0	X	11 100,0	11 100,0	X	11 443,1	11 443,1	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		360 461,0	360 461,0	X	360 461,0	360 461,0	X	355 759,2	355 759,2	X

1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		87 915,0	87 915,0	X	87 915,0	87 915,0	X	102 884,9	102 884,9	X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		77 350,0	77 350,0	X	77 350,0	77 350,0	X	70 117,1	70 117,1	X
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահունակ խաղերի և վիճակահաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		106 988,0	106 988,0	X	106 988,0	106 988,0	X	116 381,3	116 381,3	X
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		2 250,0	2 250,0	X	2 250,0	2 250,0	X	2 240,0	2 240,0	X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		1 593 000,0	1 593 000,0	X	1 353 000,0	1 353 000,0	X	1 220 645,9	1 220 645,9	X
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		3 272,0	3 272,0	X	3 272,0	3 272,0	X	2 890,0	2 890,0	X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		1 390,0	1 390,0	X	1 390,0	1 390,0	X	880,0	880,0	X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		52 500,0	52 500,0	X	52 500,0	52 500,0	X	50 780,0	50 780,0	X
1146	ժգ) Ավտոկայանատեղի համար		920 000,0	920 000,0	X	920 000,0	920 000,0	X	889 184,1	889 184,1	X
1147	ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		21 290,0	21 290,0	X	21 290,0	21 290,0	X	22 050,6	22 050,6	X
1148	ժե) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		64 491,0	64 491,0	X	64 491,0	64 491,0	X	70 503,9	70 503,9	X
1149	ժզ) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		1 000,0	1 000,0	X	1 000,0	1 000,0	X	1 010,0	1 010,0	X
1150	ժէ) Այլ տեղական տուրքեր		0,0	0,0	X	0,0	0,0	X	27 000,0	27 000,0	X
<b>1160</b>	<b>1.4 Արանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ այդ թվում՝</b>	<b>7146</b>	<b>375 000,0</b>	<b>375 000,0</b>	<b>X</b>	<b>375 000,0</b>	<b>375 000,0</b>	<b>X</b>	<b>378 415,8</b>	<b>378 415,8</b>	<b>X</b>
1161	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1162 + տող 1163 ) այդ թվում՝		375 000,0	375 000,0	X	375 000,0	375 000,0	X	378 415,8	378 415,8	X
1162	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		75 000,0	75 000,0	X	75 000,0	75 000,0	X	74 845,9	74 845,9	X
1163	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից թաղվածքներ տալու համար		300 000,0	300 000,0	X	300 000,0	300 000,0	X	303 569,9	303 569,9	X
<b>1170</b>	<b>1.5 Այլ հարկային եկամուտներ</b> (տող 1171 + տող 1175 ) թվում՝	<b>7161</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>
1171	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1172 + տող 1173 + տող 1174) ուղից՝		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X

1172	ա) Եկամտահարկ		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1173	բ) Շահութահարկ		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1174	գ) Օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1175	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1200	<b>2. ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՆՈՐԴՆԵՐ</b> (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝	<b>7300</b>	<b>22 910 127,7</b>	<b>22 815 991,3</b>	<b>94 136,4</b>	<b>23 059 300,1</b>	<b>22 965 163,7</b>	<b>94 136,4</b>	<b>23 058 860,4</b>	<b>22 964 833,7</b>	<b>94 026,7</b>
1210	<b>2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից</b> այդ թվում՝	<b>7311</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1220	<b>2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից</b> այդ թվում՝	<b>7312</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
1230	<b>2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից</b> այդ թվում՝	<b>7321</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1240	<b>2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից</b> այդ թվում՝	<b>7322</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
1250	<b>2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից</b> (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258) որից՝	<b>7331</b>	<b>22 815 991,3</b>	<b>22 815 991,3</b>	<b>X</b>	<b>22 965 163,7</b>	<b>22 965 163,7</b>	<b>X</b>	<b>22 964 833,7</b>	<b>22 964 833,7</b>	<b>X</b>
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		12 268 897,7	12 268 897,7	X	12 267 763,3	12 267 763,3	X	12 267 763,3	12 267 763,3	X
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1255 + տող 1256) այդ թվում՝		2 000 000,0	2 000 000,0	X	2 000 000,0	2 000 000,0	X	2 000 000,0	2 000 000,0	X
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		2 000 000,0	2 000 000,0	X	2 000 000,0	2 000 000,0	X	2 000 000,0	2 000 000,0	X
1257	գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		8 547 093,6	8 547 093,6	X	8 697 400,4	8 697 400,4	X	8 697 070,4	8 697 070,4	X

1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
<b>1260</b>	<b>2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262)</b>	<b>7332</b>	<b>94 136,4</b>	<b>X</b>	<b>94 136,4</b>	<b>94 136,4</b>	<b>X</b>	<b>94 136,4</b>	<b>94 026,7</b>	<b>X</b>	<b>94 026,7</b>
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		94 136,4	X	94 136,4	94 136,4	X	94 136,4	94 026,7	X	94 026,7
1262	բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
<b>1300</b>	<b>3. ԱՅԼ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ</b> (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝	<b>7400</b>	<b>34 777 749,5</b>	<b>34 767 749,5</b>	<b>2 956 333,6</b>	<b>33 616 624,6</b>	<b>33 606 624,6</b>	<b>2 997 817,6</b>	<b>39 804 082,2</b>	<b>39 801 188,9</b>	<b>2 962 335,8</b>
<b>1310</b>	<b>3.1 Տոկոսներ</b> այդ թվում՝	<b>7411</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
<b>1320</b>	<b>3.2 Շահաբաժիններ</b> այդ թվում՝	<b>7412</b>	<b>149 980,0</b>	<b>149 980,0</b>	<b>X</b>	<b>116 980,0</b>	<b>116 980,0</b>	<b>X</b>	<b>111 148,7</b>	<b>111 148,7</b>	<b>X</b>
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		149 980,0	149 980,0	X	116 980,0	116 980,0	X	111 148,7	111 148,7	X
<b>1330</b>	<b>3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ</b> (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝	<b>7415</b>	<b>1 032 756,0</b>	<b>1 032 756,0</b>	<b>X</b>	<b>872 756,0</b>	<b>872 756,0</b>	<b>X</b>	<b>770 033,4</b>	<b>770 033,4</b>	<b>X</b>
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		597 884,0	597 884,0	X	597 884,0	597 884,0	X	524 937,7	524 937,7	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությունը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		55 000,0	55 000,0	X	55 000,0	55 000,0	X	59 820,2	59 820,2	X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		379 872,0	379 872,0	X	219 872,0	219 872,0	X	185 275,5	185 275,5	X
<b>1340</b>	<b>3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից</b> (տող 1341 + տող 1342 + տող 1343) այդ թվում՝	<b>7421</b>	<b>29 092 799,1</b>	<b>29 092 799,1</b>	<b>X</b>	<b>28 059 674,2</b>	<b>28 059 674,2</b>	<b>X</b>	<b>34 586 412,2</b>	<b>34 586 412,2</b>	<b>X</b>
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		28 939 799,1	28 939 799,1	X	27 938 674,2	27 938 674,2	X	34 445 607,1	34 445 607,1	X
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ		153 000,0	153 000,0	X	121 000,0	121 000,0	X	140 805,1	140 805,1	X

1350	<b>3.5 Վարչական գանձումներ</b> (տող 1351 + այդ թվում՝ տող 1352)	<b>7422</b>	<b>3 965 514,4</b>	<b>3 965 514,4</b>	<b>X</b>	<b>3 935 514,4</b>	<b>3 935 514,4</b>	<b>X</b>	<b>3 348 244,8</b>	<b>3 348 244,8</b>	<b>X</b>
1351	Տեղական վճարներ		3 655 514,4	3 655 514,4	X	3 655 514,4	3 655 514,4	X	3 056 629,2	3 056 629,2	X
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		310 000,0	310 000,0	X	280 000,0	280 000,0	X	291 615,6	291 615,6	X
1360	<b>3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից</b> (տող 1361 + տող 1362+տող1363)	<b>7431</b>	<b>298 900,0</b>	<b>298 900,0</b>	<b>X</b>	<b>393 900,0</b>	<b>393 900,0</b>	<b>X</b>	<b>501 327,8</b>	<b>501 327,8</b>	<b>X</b>
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		298 900,0	298 900,0	X	393 900,0	393 900,0	X	501 153,5	501 153,5	X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից		0,0	0,0	X	0,0	0,0	X	154,3	154,3	X
1363	Համայնքի բյուջեի մուտքեր այլ իրավախախտումների համար տուգանքներից և պատժամիջոցներից		0,0	0,0	X	0,0	0,0	X	20,0	20,0	X
1370	<b>3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b> (տող 1371 + տող 1372) թվում՝	<b>7441</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
1380	<b>3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b> (տող 1381 + տող 1382) թվում՝	<b>7442</b>	<b>10 000,0</b>	<b>X</b>	<b>10 000,0</b>	<b>10 000,0</b>	<b>X</b>	<b>10 000,0</b>	<b>0,0</b>	<b>X</b>	<b>0,0</b>
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից		10 000,0	X	10 000,0	10 000,0	X	10 000,0	0,0	X	0,0
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X	0,0
1390	<b>3.9 Այլ եկամուտներ</b> (տող 1391 + տող 1392 + տող 1393) այդ թվում՝	<b>7452</b>	<b>227 800,0</b>	<b>227 800,0</b>	<b>2 946 333,6</b>	<b>227 800,0</b>	<b>227 800,0</b>	<b>2 987 817,6</b>	<b>486 915,5</b>	<b>484 022,2</b>	<b>2 962 335,8</b>

1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		0,0	X	0,0	0,0	X	0,0	2 737,8	X	2 737,8
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		2 946 333,6	X	2 946 333,6	2 987 817,6	X	2 987 817,6	2 959 442,5	X	2 959 442,5
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		227 800,0	227 800,0	0,0	227 800,0	227 800,0	0,0	484 177,7	484 022,2	155,5

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները, որի հիմքում ընկած է հավաստիությունը և հստակությունը:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 76,561,620.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 70,618,885.8 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 108.4%: Ընդ որում Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 70,514,749.4 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 76,464,700.3 հազար դրամ՝ ապահովելով 108.4% կատարողական, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված 3,091,954.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 3,056,362.5 հազար դրամ:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտները ավել են 2014 թվականի փաստացի ցուցանիշից 8,548,546.4 հազար դրամով կամ 12.6%-ով: 2015 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 19,620,911.5 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 19,057,152.7 հազար դրամ, ինչն էլ ավել է 2014 թվականի համապատասխան ցուցանիշից 257,994.6 հազար դրամով կամ 1.4%-ով:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 77,078,437.5 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 108.2%-ը: Ընդ որում, 2015 թվականի փաստացի կատարված ծախսերի ծավալը ավել է 2014 թվականի փաստացի կատարողականից 8,063,349.0 հազար դրամով: Ծրագրված ցուցանիշների նկատմամբ գերակատարումներ առկա են պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման հետ կապված որոշ վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած ծրագրերի գծով տարբերությունները



հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով:

Հարկ է նշել, որ 2015 թվականի բյուջեի ծրագրված 648,475.6 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 516,817.2 հազար դրամ պակասուրդով: Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

### ***Եկամուտներ***

Երևանի 2015 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 17.9%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 6.3%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 7.0%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.0%-ը՝ ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներից, 0.5%-ը՝ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 30.1%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհների հաշվին, 52.0%-ը ձևավորվել է այլ եկամուտների հաշվին, որից 0.1%-ը՝ շահաբաժիններից, 1.0%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 45.2%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, 4.4%-ը՝ վարչական գանձումներից, 0.7%-ը՝ մուտքեր տույժերից տուգանքներից, 0.6%-ը՝ այլ եկամուտներից:

### ***Հարկեր և տուրքեր.***

Հարկային եկամուտների և տուրքերի մասով 2015 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 13,698,677.7 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 13,942,961.1 հազար դրամի նկատմամբ՝ 2014 թվականի 13,354,871.6 հազար

դրամ փաստացի կատարողականից 343,806.1 հազար դրամով կամ 2.6%-ով ավել, այդ թվում՝

-գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 9,628,942.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 9,701,907.6 հազար դրամի նկատմամբ կամ ծրագրված ցուցանիշը կատարվել է 99.2%-ով, որը 2014 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 452,171.5 հազար դրամով:

-հողի հարկի մասով մուտքերը կազմել են 623,944.8 հազար դրամ, նախատեսված 646,366.5 հազար դրամի դիմաց:

Նշված հարկերի գծով ծրագրված ցուցանիշների որոշակի թերակատարումները պայմանավորված են մի քանի օբյեկտիվ հանգամանքներով, որոնցից հիմնականն առնչվում է 2015 թվականի հարկային եկամուտներին, որն ինչպես նախորդ տարի ծրագրվել էր առավելագույն գանձման տրամաբանությամբ, ինչը ենթադրում էր ինչպես 2015 թվականի տարեկան հաշվարկային հարկի, այնպես էլ նախկինում կուտակված ապառքների և տույժերի իրական ցուցանիշների գրեթե ամբողջական գանձում: Տարեկան հաշվարկային հարկի մասով հաշվետու տարվա ընթացքում գանձման գործընթացում առաջացող օբյեկտիվ խնդիր է հանդիսանում այն, որ ՀՀ օրենսդրությամբ տվյալ հարկի վճարման վերջնաժամկետը սահմանված է տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը, այսինքն խնդրի կարգավորման վարչարարական մեխանիզմների կիրառումը մասնակիորեն տեղափոխվում է հաջորդ տարի: Ինչ վերաբերում է նախկին ապառքների գանձմանը, որոնց բռնագանձման վերաբերյալ առկա են դատական և վարչարարական գործընթացներ, ապա դրանք ունեն ժամկետային կանխատեսելիության ցածր աստիճան, ինչն իր հերթին հնարավորություն չի տալիս պլանավորման ժամանակ արտացոլելու հաշվետու տարում գանձվող հստակ ցուցանիշները:

Չնայած վերը նշված օբյեկտիվ հանգամանքների պետք է նշել, որ նախորդ տարի ձեռնարկված միջոցառումները դրական ազդեցություն են ունեցել, ինչի արդյունքում ծրագրային ցուցանիշից շեղումը կազմել է 0.9%, իսկ փաստացի կատարողականը ավել է 2014 թվականի համապատասխան ցուցանիշից 5.0%-ով:

-տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 3,067,374.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,219,687.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 95.3%:

Տեղական տուրքերի կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար փաստացի հավաքագրված տուրքը, կազմելով 1,220,645.9 հազար դրամ և ապահովելով 39.7% տեսակարար կշիռ տեղական տուրքերի կազմում: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 355,759.2 հազար դրամ ծրագրված 360,461.0 հազար դրամի նկատմամբ: Ավտոկայանատեղի համար տուրքերի գծով ծրագրված 920,000.0 հազար դրամ ցուցանիշի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 889,184.1 հազար դրամ, որից 37,392.0 հազար դրամը՝ ծառայողական ավտոկայանատեղի կազմակերպման համար: Թեև տեղական տուրքերի որոշ տեսակների մասով առկա են ծրագրված ցուցանիշների թերակատարումներ, սակայն պետք է հաշվի առնել, որ ցուցանիշները ծրագրվում են կանխատեսելիության սկզբունքով, իսկ գանձումն իրականացվում է հաշվետու տարում փաստացի հաշվառման տվյալներով, որն էլ իրականացվել է ամբողջությամբ:

-պետական տուրքերի գծով եկամուտների փաստացի կատարողականը կազմել է 100.9% կամ հավաքագրվել է 378,415.8 հազար դրամ՝ ծրագրված 375,000.0 հազար դրամի դիմաց, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 74,845.9 հազար դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 303,569.9 հազար դրամ:

### **Պաշտոնական դրամաշնորհներ.**

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 23,058,860.4 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 23,059,300.1 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100.0%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման

սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 14,267,763.3 հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը 8,697,070.4 հազար դրամ:

### **Այլ եկամուտներ.**

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 33,616,624.6 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 39,804,082.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 118.4%-ը, որից.

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 111,148.7 հազար դրամ՝ կանխատեսված 149,980.0 հազար դրամի դիմաց:

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 770,033.4 հազար դրամ, ծրագրված 1,032,756.0 հազար դրամի դիմաց: Գույքի վարձակալության եկամուտների թերակատարումը պայմանավորված է վարձավճարների գնի կանխատեսվող փոփոխության խնդրի հետ, որի արդյունքում վարձակալները լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն չվերցնելու մտադրությամբ հրաժարվում են վարձակալված, սակայն չօգտագործվող տարածքներից:

-պետության կողմից կրթության, ջրամատակարարման, մետրոպոլիտենի կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 34,445.607.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 27,938,674.2 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 123.3%-ը:

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով ճշտված բյուջեով նախատեսված 121,000.0 հազար

դրամ ցուցանիշի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 140,805.1 հազար դրամ: Այս պարագայում կանխատեսվող ցուցանիշը հաշվարկվել էր նախորդ տարվա դիմումների վերլուծության հիման վրա, սակայն այն որպես այդպիսին կախված է ընթացիկ տարում նման ծառայության մատուցման փաստացի դիմումատուների քանակից:

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 3,056,629.2 հազար դրամ, նախատեսված 3,655,514.4 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 83.6%-ը, ինչը պայմանավորված է աղբահանության վճարների գծով կանխատեսված (ըստ մակերեսի) և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

-ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 291,615.6 հազար դրամ՝ ծրագրված 310,000.0 հազար դրամի դիմաց, կամ նախատեսվածի 94.1%-ը,

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 501,153.5 հազար դրամ, նախատեսված 298,900.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածից շուրջ 1.7 անգամ ավել,

-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 2,737.8 հազար դրամ,

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 484,177.7 հազար դրամ՝ նախատեսված 227,800.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 212.5%-ը:

## Ծախսեր

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 77,078,437.5 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 71,267,361.4 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 108.2%-ը, որն ավել է 2014 թվականի փաստացի ծախսից 8,063,349.0 հազար դրամով կամ 11.7%-ով: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 100.7%: Ընդամենը փաստացի ծախսերից 76,350,504.0 հազար դրամը կամ 95.2%-ը ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 3,687,376.0 հազար դրամը կամ 4.8%-ը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), ինչպես նաև 4,747,828.1 հազար դրամի ծախսեր իրականացվել են ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի հաշվին:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 36.4%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 14.7%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 9.8%:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	5,792,137.90	5,658,208.34	97.69%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	29,202,120.90	28,894,127.52	98.95%
Սուբսիդիաներ	14,924,675.50	14,847,993.33	99.49%
Դրամաշնորհներ	1,664,331.50	1,640,762.60	98.58%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1,232,292.20	1,119,838.70	90.87%
Այլ ծախսեր	14,719,373.80	21,230,130.90	114.23%

Հիմնական միջոցներ	9,370,332.10	8,295,507.54	88.53%
Պաշարներ	151,000.00	139,696.53	92.51%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-1,250,000.00	-545,406.20	43.63%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-4,538,902.50	-4,202,421.80	92.59%
<b>Ընդամենը</b>	<b>71,267,361.40</b>	<b>77,078,437.46</b>	<b>108.15%</b>

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	8,029,338.90	7,574,675.09	94.34%
Պաշտպանություն	37,070.00	34,683.68	93.56%
Տնտեսական հարաբերություններ	5,841,706.60	7,859,027.20	134.53%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	7,593,981.30	7,555,093.00	99.49%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	13,578,792.60	17,158,653.16	126.36%
Առողջապահություն	326,352.00	294,130.87	90.13%
Հանգիստ, մշակույթ և կրոն	3,987,950.70	3,717,073.60	93.21%
Կրթություն	26,223,403.60	26,046,054.30	99.32%
Սոցիալական պաշտպանություն	1,807,658.40	1,691,955.16	93.60%
Պահուստային ֆոնդեր	3,841,107.30	5,147,091.40	134.00%
<b>Ընդամենը</b>	<b>71,267,361.40</b>	<b>77,078,437.46</b>	<b>108.15%</b>

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի ծախսերի կատարողականի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների և տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի վերլուծությամբ (բացառությամբ պատվիրակված լիազորությունների) նախատեսված ցուցանիշներից փաստացի կատարողականների շեղումը պայմանավորված է գրեթե բոլոր ծրագրերի գծով առկա տնտեսումներով:

Միաժամանակ՝ Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

h/h	Վարչական շրջանի անվանումը	2015 թվականի բյուջեով նախատեսված	2015 թվականին փաստացի ծախսը	2014 թվականին փաստացի ծախսը	Կատարման %-ը 2015 թ. նախատեսվածի նկատմամբ	Կատարման %-ը 2014 թ. փաստացի նկատմամբ
1.	Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)	46,026,783.00	52,373,460.08	46,154,590.30	113.79%	113.47%
2.	Աջափնյակ	2,475,816.90	2,448,083.34	2,212,272.40	98.88%	110.66%
3.	Ավան	1,506,030.80	1,479,745.38	1,384,226.30	98.25%	106.90%
4.	Արաբկիր	2,829,326.50	2,778,491.21	2,607,466.00	98.20%	106.56%
5.	Դավթաշեն	1,175,108.89	1,154,469.47	1,018,143.60	98.24%	113.39%
6.	Էրեբունի	2,291,431.10	2,258,219.38	2,099,961.40	98.55%	107.54%
7.	Կենտրոն	3,622,698.50	3,538,720.88	3,412,565.50	97.68%	103.70%
8.	Մալաթիա-Սեբաստիա	2,874,344.00	2,814,718.08	2,581,175.80	97.93%	109.05%
9.	Նոր Նորք	2,944,849.60	2,865,477.11	2,661,839.90	97.30%	107.65%
10.	Նորք-Մարաշ	533,486.00	499,595.68	501,566.70	93.65%	99.61%
11.	Նուբարաշեն	334,458.40	317,613.07	290,427.50	94.96%	109.36%
12.	Շենգավիթ	2,779,241.30	2,706,160.17	2,469,650.50	97.37%	109.58%
13.	Քանաքեռ-Զեյթուն	1,873,786.40	1,843,683.61	1,700,405.30	98.39%	108.43%
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>71,267,361.40</b>	<b>77,078,437.46</b>	<b>69,094,291.20</b>	<b>108.15%</b>	<b>111.56%</b>



Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

**1. Կառավարման մարմնի պահպանում** ծրագրով 2015 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 7,443,364.4 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 7,141,623.5 հազար դրամ կամ նախատեսվածի 95.9%-ը, որը ավել է 2014 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 655,502.3 հազար դրամով: Այս ծախսերը իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները:

Նշված ծրագրով նախատեսված ծախսերում մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի գծով ծախսերը՝ 4,665,718.8 հազար դրամ՝ նախատեսված 4,751,923.9 հազար դրամի դիմաց կամ 98.2%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 3-Ա որոշմամբ (30.04.15թ. N 322-Ա որոշման ճշտումով) սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 1998 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 1983 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 561,171.3 հազար դրամ՝ նախատեսված 607,538.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.4%: Պարգևատրման ֆոնդի հաշվին պարգևատրվել են հիմնականում տարվա ընթացքում լրացուցիչ աշխատանք կատարող աշխատողները, ինչպես նաև տարեվերջին Երևանի քաղաքապետարանի գրեթե բոլոր աշխատողները (բացառությամբ առաջադրանքները թերակատարած առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև տարվա ընթացքում նկատողություն ստացած աշխատողների)՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 251,852.1 հազար դրամ՝ նախատեսված 276,236.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 91.2%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը: Այս հոդվածով ծախսերն ավել են 2014 թվականի ցուցանիշից 29,950.6 հազար դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2015 թվականի օգոստոսի 1-ից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխությամբ:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 14,980.0 հազար դրամ նախատեսված 17,394.6 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 229,160.7 հազար դրամ՝ նախատեսված 252,514.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 90.8% և ներառում են փոստային և սուրհանդակային ծառայությունների, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների համար տրամադրված գումարները: 2015 թվականին կատարված ծախսերը ավել են 2014 թվականին կատարված ծախսերից 41,991.2 հազար դրամով, ինչը պայմանավորված է 2015 թվականին մեծածավալ վարչարարության արդյունքում փոստային ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Ապահովագրական ծախսերը կազմել են 4,906.6 հազար դրամ՝ նախատեսված 5,474.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 89.6%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական գործընթացն իրականացնելուն:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 89,659.8 հազար դրամ՝ նախատեսված 89,660.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100.0%, որը ավել է 2014 թվականի փաստացի ցուցանիշից 60.7 հազար դրամով կամ 0.1%-ով: Այս գումարի շրջանակներում ապահովվել է քաղաքապետարանի թվով 18 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի աշխատավարձը և այլն, ինչպես նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի

քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի մի մասը:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 41,974.5 հազար դրամ՝ նախատեսված 55,985.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 75.0%, որի շրջանակներում Երևանի ավագանու, քաղաքապետարանի և վարչական շրջանների թվով 25 պատվիրակություններ (71 անձ) գործուղվել են թվով 21 քաղաքներ, մասնակցություն են ունեցել 24 միջոցառումների: Երևանի քաղաքապետարանի կողմից 2015 թվականին իրականացված արտաքին նպատակային քաղաքականության արդյունքում պաշտոնական այցեր են կատարվել Կրասնադար, Ստավրոպոլ, Դոնի Ռոստով, Թբիլիսի, Կարրարա, Մոսկվա, Սուրգուտ, Ստավրոպոլ, Վոլգոգրադ, Նովոսիբիրսկ, Սանկտ-Պետերբուրգ Փարիզ, Անտոնի, Բոլգորոդ, Պսկով, Վիեննա, Առնովիլ, Պրահա, Պլեսի Ռոբինսոն, Բրյուսել, Ղազվին, Թեհրան և Մարսել, ինչպես նաև ստորագրվել են Վոլգոգրադի քաղաքի հետ եղբայրացման համաձայնագիրը, 3 համագործակցության ծրագիր Սանկտ Պետերբուրգի, Դոնի Ռոստովի և Ստեփանակերտի հետ, քույրացման մասին համաձայնագիր Դավթաշեն վարչական շրջանի և ֆրանսիական Անտոնի քաղաքի միջև, հուշագիր՝ Նուբարաշեն վարչական շրջանի և ֆրանսիական Առնովիլ քաղաքի միջև: Գործուղումների գծով բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման համար ծախսերը կազմել են 3,379.5 հազար դրամ՝ նախատեսված 3,404.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.3%, որն ավել է 2014 թվականի փաստացի ցուցանիշից 479.0 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 36,743.0 հազար դրամ՝ նախատեսված 36,954.0 հազար դրամի դիմաց կամ 2014 թվականի փաստացի ցուցանիշից 1,025.5 հազար դրամով ավել, ինչը ներառում է քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, ինչպես նաև վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 8,869.5 հազար դրամ՝ նախատեսված 10,010.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 88.6%-ով, ինչը 372.3 հազար դրամով ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Նշված գումարի շրջանակներում իրականացվել է թվով 405 համայնքային ծառայողների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 37,192.4 հազար դրամ՝ նախատեսված 39,489.1 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 94.2%-ով, ինչը ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 292.3 հազար դրամով: Այս ծախսերը ներառում են պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական ծառայությունների ձեռք բերման ծախսերը, իսկ աճը 2014 թվականի համեմատ պայմանավորված է փաստաթղթաշրջանառության ծավալների ավելացմամբ և բլանկների տպագրության ծավալներով:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 4,200.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 4,200.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 100.0%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևանի

քաղաքապետարանի 2014 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունների ձեռք բերումը: Հարկ է նշել, որ Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեով ի սկզբանե նախատեսվել էր 10,000.0 հազար դրամ, սակայն մրցույթի ընթացքում ծառայությունը ձեռք է բերվել շատ ավելի ցածր գնով:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 129,435.9 հազար դրամ՝ նախատեսված 138,563.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 93.4%-ով, ինչի շրջանակներում ամբողջությամբ և լիարժեք ապահովվել է թվով 36 պատվիրակությունների և հյուրերի ընդունելությունների և արարողակարգային բնույթի միջոցառումների (ներառյալ արարողական հուշանվերների, հյուրանոցային և տրանսպորտային ծախսերի, թարգմանչական ծառայությունների, հյուրասիրության, հանքային ջրի և այլն) հետ կապված ծախսերը, ինչպես նաև ապահովվել են քաղաքապետարանում և վարչական շրջանների աշխատակազմերում առօրյա ներկայացուցչական ծախսերը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները (հավաքարարների աշխատավարձ), նյութերի ձեռք բերումը, ընթացիկ այլ աշխատանքները, ինչպես նաև վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցման համար անհրաժեշտ ծառայությունները, որի գծով փաստացի կատարողականը կազմել է 300,058.5 հազար դրամ կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 100.0%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 10,226.6 հազար դրամ՝ նախատեսված 11,550.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 88.5%-ով, ինչը 2,284.4 հազար դրամով ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, գազի, ավտոմատ հեռախոսակայանների սպասարկման, ինչպես նաև հնոցապահի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 262,724.5 հազար դրամ՝ նախատեսված 269,139.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 97.6%, ինչը ավել է

2014 թվականի փաստացի ցուցանիշից 10.4%-ով: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 54,992.8 հազար դրամի ծախս՝ նախատեսված 70,687.1 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 77.8%-ով, ինչը պակաս է 2014 թվականի փաստացի ցուցանիշից 3,933.9 հազար դրամով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել զուտ գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 243,780.3 հազար դրամ՝ նախատեսված 258,370.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 94.4%, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը (հիմք՝ Երևանի քաղաքապետի 2015 թվականի հունվարի 27-ի N 131-Ա որոշում):

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 15,852.4 հազար դրամ՝ նախատեսված 21,371.7 հազար դրամի դիմաց, ինչը 414.1 հազար դրամով ավել է 2014 թվականի համապատասխան ցուցանիշից և 5,519.3 հազար դրամով պակաս է 2015 թվականի ճշտված ցուցանիշից, որն էլ պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 5,848.0 հազար դրամ՝ նախատեսված 5,850.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100.0%, ինչը 29.0 հազար դրամով ավել է 2014 թվականի նույն ցուցանիշից և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ

միջոցառումների համար նախատեսված ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերումը:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 37,531.4 հազար դրամ՝ նախատեսված 39,150.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Դրամական փոխհատուցում տրամադրելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի N 629-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ա որոշմամբ սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչպես նաև մեկ անձի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվել է խեղման նպաստ:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 1,825.5 հազար դրամ՝ նախատեսված 3,225.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը:

Այլ ծախսերի հոդվածով նախատեսված 7,564.0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Տրանսպորտային սարքավորումների հոդվածով ավտոմեքենայի ձեռք բերման համար նախատեսվել էր 9,000.0 հազար դրամ, սակայն ավտոմեքենա ձեռք չի բերվել, իսկ նախատեսված գումարը ամբողջությամբ մնացել է որպես խնայողություն:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 122,662.9 հազար դրամ՝ նախատեսված 149,911.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 81.8%, ինչն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով փաստացի ծախսը կազմել է 6,876.6 հազար դրամ՝ նախատեսված 8,091.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 85.0%, որի շրջանակներում փոխարինվել են քաղաքապետարանի վարչական շենքի էլեկտրական մուտքային վահանակները:

2. **Վարչական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 118,598.8 հազար դրամ՝ նախատեսված 137,498.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 86.3%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շենքերի հիմնանորոգման, ինչպես նաև քաղաքապետարանի վարչական շենքի աշտարակի վերանորոգման աշխատանքներ:

3. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 88,840.3 հազար դրամ՝ նախատեսված 92,595.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 95.9%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 215-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. **Նախագծային աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 84,948.1 հազար դրամ՝ նախատեսված 183,860.0 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2014 թվականի փաստացի ցուցանիշից 100,236.5 հազար դրամով պակաս: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

5. **Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,940.0 հազար դրամ՝ նախատեսված 6,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.0%, ինչի շրջանակներում նախորդ տարիների կատարված աշխատանքների վերլուծության հիման վրա կատարվել են Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներով պայմանավորված վերլուծական աշխատանքներ:

6. **Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,800.0 հազար դրամ՝ նախատեսված 27,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.3%, որն ուղղվել է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի մնացած հատվածների գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակման աշխատանքներին:



**7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 107,924.4 հազար դրամ՝ նախատեսված 139,020.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.6%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

**8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և գորակոչի կազմակերպմանն աջակցություն** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 34,683.7 հազար դրամ՝ նախատեսված 37,070.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.6%, որոնց շրջանակներում վառելիքով, տրանսպորտային միջոցներով և գրասենյակային նյութերով աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային Ջինկոմիսարիատներին և քաղաքացիական պաշտպանության կառույցներին:

**9. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 165,378.1 հազար դրամ՝ նախատեսված 171,453.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 96.5%, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից պակաս է 25,090.3 հազար դրամով: Փաստացի կատարողական ցուցանիշի շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում ընդհանուր 12.0կմ երկարությամբ ոռոգման ցանցեր են կառուցվել և անցկացվել Չեխով-Արտաշիսյան-Շիրակ, Խաղ Դոն, Ալեք Մանուկյան, Ալիխանյան փողոցներում, Աջափնյակ Գ.3 և Առինջ-Ավան թաղամասերում և Ար.Կարապետյանի անվան զբոսայգում:

**10. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,650,214.3 հազար դրամ՝ նախատեսված 3,684,990.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.1%, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայրթերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 900 հազար քառակուսի մետր մակերեսով

ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև փողոցների ճաքալցման աշխատանքներ:

**11. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 148,460.4 հազար դրամ՝ նախատեսված 150,000.0 հազար դրամի դիմաց, ինչը պակաս է 2014 թվականի համապատասխան ցուցանիշից 270,478.6 հազար դրամով: Նշված գումարի շրջանակներում իրականացվել են հողային պաստառով ճանապարհների շուրջ 11 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:

**12. Եզրաքարերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 32,513.7 հազար դրամ՝ նախատեսված 32,960.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.6%, որից 17,530.8 հազար դրամը թվով 5 վարչական շրջաններում եզրաքարերի ընթացիկ նորոգման, իսկ 14,982.9 հազար դրամը Երևան քաղաքի փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար՝ ընդհանուր 2,000 գծմ երկարությամբ:

**13. Հենապատերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 67,664.0 հազար դրամ՝ նախատեսված 90,352.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 74.9%, որը պակաս է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 80,700.6 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են թվով 2 վարչական շրջաններում գտնվող խիստ վթարային հենապատերը (Կենտրոն՝ 2, Նորք-Մարաշում՝ 3) և հիմնանորոգվել է թվով 3, ընթացիկ վերանորոգվել է թվով 7 հենապատ:

**14. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,241.5 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 6,344.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում հիմնանորոգվել է Նորք-Մարաշ վարչական շրջանում Նորք-Մարաշ 5 փողոցից Օլիմպոս կրթահամալիր տանող հետիոտն անցումը և «Երևանի հ.121 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ից Հին Նորք բարձրացող ճանապարհը:

**15. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 89,964.0 հազար դրամ՝ նախատեսված 90,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 4

կամուրջների, 3 էստակադաների, 2 հետիոտն վերգետնյա անցումների, 15 ուղեանցերի և ուղետարերի պահպանումը:

**16. Հրազդանի կիրճի քարեկարգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,938.4 հազար դրամ՝ նախատեսված 2,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման աշխատանքներ:

**17. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83,714.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 157,675.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 53.1%, որի շրջանակներում իրականացվել են շուրջ 4,800 քմ մայթերի սալիկապատման աշխատանքներ և Վիլնուսի փողոցի նորակառույց հատվածի հենապատի կառուցման աշխատանքներ:

**18. Փողոցների պահպանում և շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 59,859.4 հազար դրամ՝ նախատեսված 60,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի որոշ փողոցների մետաղական ցանկապատերի և միջնապատերի վերանորոգման և ներկման աշխատանքներ:

**19. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 804,699.2 հազար դրամ՝ նախատեսված 805,500.0 հազար դրամի դիմաց և վճարումն իրականացվել է փաստացի հավաքագրված ավտոկայանատեղի տուրքի և տուգանքների գծով գումարներից պայմանագրով նախատեսված հարաբերակցությամբ:

**20. Թեքահարթակների կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 39,987.9 հազար դրամ՝ նախատեսված 40,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որի շրջանակներում Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների մայթերի մուտքերում կառուցվել են թվով 375 թեքահարթակներ, որից թվով 90-ը մասնավորի հետ համագործակցության արդյունքում:

**21. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 190,872.6 հազար դրամ՝ նախատեսված 220,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 86.8%, ինչի շրջանակներում ձեռք է բերվել և տեղադրվել տարբեր տիպի 850 նստարաններ, 600 աղբաման, թվով 50 անվճար հայտարարությունների տախտակներ, թվով 30 ծառաբների մետաղական

ծածկույթ, պատրաստվել և տեղադրվել են թվով 500 դրոշակահենք, թվով 40 հեծանվային կանգառներ, ամբողջապես թարմացվել է «Մոսկվա» կինոթատրոնի դիմաց տեղադրված ինտերակտիվ շախմատը, ինչպես նաև նորոգվել են թվով 50 վնասված նստարան ամբողջությամբ և 360 նստարան մասնակի, 250 աղբաման ամբողջությամբ և 400 աղբաման մասնակի:

**22. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 457,423.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 474,560.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.4%:

**23. Վերելակների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 85,045.1 հազար դրամ՝ նախատեսված 87,392.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.3%, որի շրջանակներում թվով 9 վարչական շրջաններում նորոգվել են թվով 442 վերելակ:

**24. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,469,202.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

**25. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 590,774.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

**26. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրով (պատվիրակված լիազորություններ)** փաստացի ծախսը կազմել է 284,931.5 հազար դրամ՝ նախատեսված 552,443.1 հազար դրամի դիմաց կամ 51.6%, ինչը պայմանավորված է բանկի ընթացակարգերով որոշ վճարումների հետաձգմամբ:

27. **Զբոսաշրջության զարգացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 14,850.0 հազար դրամ՝ նախատեսված 15,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.0%:

28. **Դրոշների տեղադրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 34,814.9 հազար դրամ՝ նախատեսված 48,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 72.5%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել թվով 7,000 դրոշ Երևան քաղաքի տարբեր վայրերում, մասնավորապես Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 159 դպրոցներում և 160 մանկապարտեզներում, 36 մշակութային օջախներում, 24 սպորտ-դպրոցներում և 8 շախմատի դպրոցներում: Օտարերկյա նախագահների այցերի հետ կապված դրոշակազարդարման համար օգտագործվել է թվով 225 հատ դրոշ: Միաժամանակ պատրաստվել և Երևան քաղաքի տարբեր վայրերում տեղադրվել կամ փոխարինվել է թվով 5,819 դրոշակահենք:

29. **Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,591.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը, ուղղվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների ձեռք բերմանն ու տեղադրմանը, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանությանը:

30. **Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 134,657.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

31. **Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 369,896.5 հազար դրամ՝ նախատեսված 372,309.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.4%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել թվով 76 կրթական,

մշակութային և այլ կազմակերպությունների, այդ թվում՝ համայնքային ենթակայության (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, հասարակական կազմակերպություն և այլն):

**32. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր** ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 4,747,828.1 հազար դրամ:

**33. Տոնական ձևավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 50,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ տոնական օրերին Երևան քաղաքը՝ ներառյալ բոլոր վարչական շրջանները պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական դեկորատիվ առարկաներ, լույսեր և այլ զարդարանքներ ձեռք բերելու համար:

**34. Հասցեավորման աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 102,822.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 103,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%, որն ամբողջությամբ ուղղվել է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերմանը:

**35. Ներդրումային ծրագրերի իրականացման** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 110,000.0 հազար դրամ՝ նախատեսված 128,200.0 հազար դրամի դիմաց, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

**36. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 274,337.4 հազար դրամ՝ նախատեսված 357,211.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 76.8%, որից 13,009.8 հազար դրամով իրականացվել են աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրական աշխատանքներ, 167,772.1 հազար դրամը վճարվել է թվով 12 վարչական շրջաններում օպերատորների միջոցով աղբահանության վճարների գանձման ծառայությունների համար և 93,555.5 հազար դրամը հատկացվել է համատիրություններին վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց:

**37. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,197.6 հազար

դրամ՝ նախատեսված 13,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.8%, ինչի շրջանակներում 5,988.0 հազար դրամը ուղղվել է տեսահաղորդակցման հնարավորությամբ տեղեկատվական դիսպետչերական կենտրոնի ստեղծմանը, դիպետչերական կենտրոն զանգահարելու համար կարիքավոր խուլ և համր մարդկանց տեսահաղորդակցման հնարավորությամբ պլանշետների տրամադրմանը, 4,833,6 հազար դրամը՝ թվով 37 ավտոբուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովմանը և կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորմանը, իսկ 1,376.0 հազար դրամն ուղղվել է հաշմանդամներին ավտոկայանատեղիի արտոնության սահմանման գործընթացի իրականացմանը:

**38. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 14,970.0 հազար դրամ՝ նախատեսված 15,300.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.8%:

**39. Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,064,962.9 հազար դրամ՝ նախատեսված 5,070,106.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մատուցվել են սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության ծառայություններ:

**40. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 261,192.9 հազար դրամ՝ նախատեսված 264,102.4 հազար դրամի դիմաց: Ընդհանուր կատարողականը կազմել է 98.9 %:

**41. Գետերի հունների մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որի շրջանակներում մաքրման աշխատանքներ են իրականացվել թվով 5 վարչական շրջաններում:

**42. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,714,026.7 հազար դրամ՝ նախատեսված 1,715,408.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որից 1,500,854.4 հազար դրամը

ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների կանաչ տարածքների պահպանման աշխատանքներին, 19,982.4 հազար դրամով գարնանային և աշնանային ծառատունկի համար ձեռք են բերվել թվով 20 հազար հատ դեկորատիվ ծառեր և դեկորատիվ թփեր: 40,000.0 հազար դրամը ուղղվել է քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերին, և 93,189.9 հազար դրամով վերականգնվել և բարեկարգվել է Շենգավիթ վարչական շրջանի Ա. Կարապետյանի անվան պուրակը և Աջափնյակ վարչական շրջանի Գ-3 թաղամասի ծառուղուց մինչև Սիլիկյան թաղամաս տանող տարածքը:

**43. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)**

ծրագրով փաստացի ծախսը կազմել է 40,923.0 հազար դրամ՝ նախատեսված 41,051.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որի շրջանակներում թվով 7 վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակարան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

**44. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,414.0 հազար դրամ՝ նախատեսված 2,430.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.3%, որի շրջանակներում Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

**45. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 341,286.7 հազար դրամ՝ նախատեսված 342,200.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որից 19,717.5 հազար դրամը ուղղվել է 1000 խմ կարմիր ավազի, 514 լիտր թունաքիմիկատի ձեռք բերմանը և սիզամարգերի գեղարվեստական ձևավորմանը, 221,900.0 հազար դրամը ուղղվել է թվով 1,124,000 ծաղկասածիլների, 5,000 գնդաձև ակացիանների, 3,330 կգ խոտի սերմի, 1,300 ոսկեգույն կիպարիսի տնկիների և թվով 520,000 վարդակակաչի սոխուկների և 99,669.2 հազար դրամը՝ 15,941 խմ բուսահողի ձեռք բերմանը:

**46. Թափառող կենդանիների վնասազերծում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 91,603.8 հազար դրամ՝ նախատեսված 120,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 76.3%, որի շրջանակներում ստերիլիզացվել է



4,278 թափառող կենդանի (միավորի գինը էգերի համար 11,500 դրամ, արուներինը՝ 8,800 դրամ), քնեցվել է 214-ը (միավորի գինը 3,900 դրամ), և վնասագերծվել 8,020 կենդանի (միավորի գինը 5,700 դրամ):

**47. Ինքնակամ կառույցների քանդում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 21,567.3 հազար դրամ՝ նախատեսված 22,514.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.8%, որի շրջանակներում 12 վարչական շրջաններում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին:

**48. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակատարածություններից գրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռք բերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,330,713.3 հազար դրամ՝ նախատեսված 3,603,331.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.4%: Այս ծրագիրը ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515 -Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Երևանի քաղաքապետարանին հատկացված 2,000,000.0 հազար դրամը՝ Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերմանն աջակցելու նպատակով: Համայնք-պետություն համագործակցության շրջանակներում Շինարարների 6, Շինարարների 15, Մարգարյան 45, Սիսակյան 16 հասցեներում ավարտվել են 2014 թվականին սկսած թվով 4 բազմաբնակարան շենքերի կառուցման աշխատանքները, որոնք բոլորը շահագործման են հանձնվել 2015 թվականին: Նշված շենքերը կառուցվել են են նախկին վթարային շենքերի տեղում: Ծրագրի իրականացման արդյունքում հնարավորություն ստեղծվեց վերաբնակեցնելու 01.01.2014թ. դրությամբ հաշվառված բոլոր 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչներին:

**49. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրով (պատվիրակված լիազորություններ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման**

ծրագիր (պատվիրակված լիազորություններ), Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ), Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (պատվիրակված լիազորություններ), Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 8,720,796.8 հազար դրամ՝ նախատեսված 4,702,073.5 հազար դրամի դիմաց:

50. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 40,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում Երևան քաղաքի թվով 4 չլուսավորված փողոցներում կառուցվել է արտաքին լուսավորության ցանց:

51. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,233,057.5 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երքադլույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին (աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ):

52. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,962.2 հազար դրամ՝ նախատեսված 9,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.6%, որն ամբողջությամբ ուղղվել է Շենգավիթ վարչական շրջանում Բագրատունյաց փողոցի և Գ. Նժդեհի հրապարակի շենքերի նեոնային լուսավորության վերականգնմանը և պահպանմանը:

53. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,382.0 հազար դրամ՝ նախատեսված 8,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 79.8%, որն ուղղվել է

վթարային շենքերի սեյսմիկ հետազոտման և ինքնակամ կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին:

**54. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 439,181.0 հազար դրամ՝ նախատեսված 462,420.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.0%, որի սահմաններում մայրաքաղաքի թվով 11 վարչական շրջաններում (բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի) մասնակի կամ ամբողջական վերանորոգվել են 727 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներ, ինչպես նաև 939 թեք տանիքներով շենքերի տանիքներ, որոնցից 13 շենքերի թեք տանիքներ հիմնանորոգվել են ամբողջությամբ:

**55. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 1,364,887.0 հազար դրամ՝ նախատեսված 1,469,759.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.9%, որից 60,912.0 հազար դրամն ուղղվել է բակային տարածքների ընթացիկ նորոգմանը, 25,465.6 հազար դրամով ձեռք են բերվել բակային տարածքների բարեկարգման և նորոգման համար նյութեր, 10,000.0 հազար դրամի շրջանակներում ձեռք են բերվել բակային տարածքների կահավորման անհրաժեշտ պարագաներ, որոնք տրամադրվել են համատիրություններին՝ դրանք բակային տարածքներում տեղադրելու համար, 200,000.0 հազար դրամի շրջանակներում ձեռք են բերվել և բարեկարգվող բակային տարածքներում տեղադրել մանկական խաղեր, ինչպես նաև 1,023,927.4 հազար դրամը ուղղվել է բակերի կառուցմանը և հիմնանորոգմանը, կառուցվել են 12 մինի ֆուտբոլի դաշտեր, իսկ 44,581.9 հազար դրամով բակային տարածքներում տեղադրվել են նստարաններ և զրուցարաններ: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել շուրջ 385 բակերում:

**56. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 543,855.4 հազար դրամ՝ նախատեսված 554,854.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.0%, որից 476,119.0 հազար դրամով վերանորոգվել կամ մասնակի նորոգվել է բազմաբնակարան

շենքերի թվով 791 շքամուտքեր, որոնց աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով կիրառվել են տարբեր մոտեցումներ՝ աշխատանքների իրականացման ուղղակի պատվերի կամ անհրաժեշտ նյութերով համատիրություններին ապահովելու եղանակով: 57,757.6 հազար դրամի սահմաններում մաքրվել և նորոգվել է թվով 10 շենքերի ֆասադներ, 9,978.8 հազար դրամի սահմաններում միջոցառումներ են իրականացվել թվով 4 շենքերից թափվող սալերից պաշտպանման համար:

**57. Ջրային կառույցների շահագործում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 320,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի և նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի չափով, որն ուղղվել է թվով 30 ջրային կառույցների պահպանմանը:

**58. Կաթսայատների պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,781.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի չափով, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

**59. Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 29,901.7 հազար դրամ՝ նախատեսված 30,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որի շրջանակներում գունազարդվել է թվով 33 կամարանցում և նորոգվել 1,260 քմ մակերես, վերանորոգվել և հատուկ նյութով երեսապատվել է մետաղական հենասյուների 3,600 քմ մակերես, ինչպես նաև իրականացվել են շենքերի ճակատային մասերի դեկորատիվ գունազարդման աշխատանքներ՝ 454 քմ ընդհանուր մակերեսով:

**60. Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 50,261.2 հազար դրամ՝ նախատեսված 70,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 71.8%, որի սահմաններում հիմնանորոգվել են թվով 314 վթարային պատշգամբ:

**61. Կոյուղագծերի կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 22,306.3 հազար դրամ՝ նախատեսված 27,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82.6%, որի շրջանակներում ամբողջովին

ավարտվել են 23 փողոցների 5,210 գծմ կոյուղատար ցանցի արդիականացման աշխատանքները:

**62. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 53,403.0 հազար դրամ՝ նախատեսված 71,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 74.7%: Փաստացի ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի սահմաններում ձեռք է բերվել և տրամադրվել Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին՝ թվով 10 ճեղքային լամպ, թվով 5 ուլտրաձայնային հետազոտման սարք տվիչով՝ դոպպլեր, թվով 5 կոլպոսկոպ և թվով 10 կլինիկական անալիզատոր:

**63. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,102.9 հազար դրամ՝ նախատեսված 25,027.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 52.4%, որի սահմաններում շինարարական աշխատանքներ են իրականացվել թվով 2 առողջապահական օբյեկտներում:

**64. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,800.0 հազար դրամ՝ նախատեսված 12,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 81.7%, որի սահմաններում թվով 200 սոցիալապես անապահով երևանցիներ անվճար անցել են դժվարամատչելի բուժհետազոտություն:

**65. Աջակցություն առողջապահական կազմակերպություններին** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 217,825.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ուղղվել է Երևան քաղաքի ենթակայության թվով 9 առողջապահական կազմակերպություններում տարիների ընթացքում կուտակված պարտքերի մարմանը:

**66. Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 134,901.0 հազար դրամ՝ նախատեսված 136,799.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.6%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2015 թվականին իրականացվել է թվով 156 սպորտային միջոցառում, այդ թվում՝ քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է թվով 73 սպորտային միջոցառում, Աջափնյակ վարչական շրջանում՝ 7, Ավան վարչական շրջանում՝ 4,

Արաբկիր վարչական շրջանում՝ 12, Դավթաշեն վարչական շրջանում՝ 7, Էրեբունի վարչական շրջանում՝ 7, Կենտրոն վարչական շրջանում՝ 8, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 7, Նոր Նորք վարչական շրջանում՝ 5, Նորք-Մարաշ վարչական շրջանում՝ 11, Նուբարաշեն վարչական շրջանում՝ 4, Շենգավիթ վարչական շրջանում՝ 6, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 5:

**67. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 311,288.2 հազար դրամ՝ նախատեսված 443,340.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.2%, որից 40,000.0 հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 200,000.0 հազար դրամը ուղղվել է Ստեփանակերտի այգու կառուցմանը, 71,288.2 հազար դրամի սահմաններում կառուցվել են Նոր Նորքի 6-րդ զանգվածի Բ. Մուրադյանի փողոցի հարակից տարածքը, Նոր Նորքի 1-ին զանգվածի Գայի պողոտային հարող տարածքը և Մառի 7 շենքի դիմացի տարածքը, ինչպես նաև նորոգվել է Նոր Նորքի 8-րդ զանգվածի խաչքարի հարակից տարածքը:

**68. Հեծանվահրապարակի շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 47,976.0 հազար դրամ՝ նախատեսված 48,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%:

**69. Գրադարանային ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 451,232.0 հազար դրամ՝ նախատեսված 451,232.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որն ուղղվել է Երևանի համայնքային 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

**70. Գրադարանների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 224,434.1 հազար դրամ՝ նախատեսված 234,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.7%, որով իրականացվել են թվով 16 գրադարանների նորոգման աշխատանքներ: Արդյունքում Երևան քաղաքի բոլոր գրադարանները հիմնանորոգվել են:

**71. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 253,097.1 հազար դրամ՝ նախատեսված 253,714.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8% և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների

պահպանման համար 246,448.9 հազար դրամ, իսկ 6,648.2 հազար դրամը հատկացվել է Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեից «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար:

**72. Թանգարանների նորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,726.0 հազար դրամ՝ նախատեսված 100,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 8.7%, որի շրջանակներում ցանկապատվել է Շենգավիթ հնավայրի տարածքը:

**73. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 104,140.5 հազար դրամ՝ նախատեսված 104,360.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%՝ թվով 5 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

**74. Մշակույթի տների հիմնանորոգում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 96,735.0 հազար դրամ՝ նախատեսված 97,100.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.6%, որի շրջանակներում վերանորոգվել է թվով 3 մշակույթի տուն՝ «Ավանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ը, «Երևանի «Սեբաստիա» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 5 մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ը:

**75. Մշակութային միջոցառումների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 766,966.9 հազար դրամ՝ նախատեսված 786,936.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.5%, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների՝ առանձին-առանձին կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից հիմնականներն են ամանորի միջոցառումը, Էրեբունի-Երևան տոնակատարությունը, մարտի 8-ի և ապրիլի 7-ի միջոցառումները, Անկախության օրվան նվիրված միջոցառումները և այլն: Երևան քաղաքում 2015 թվականին իրականացվել է թվով 248 մշակութային միջոցառում, այդ թվում՝ քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է թվով 43 մշակութային միջոցառում, Աջափնյակ վարչական շրջանում՝ 19, Ավան վարչական շրջանում՝ 21, Արաբկիր վարչական շրջանում՝ 16, Դավթաշեն վարչական շրջանում՝ 17, Էրեբունի վարչական շրջանում՝ 11, Կենտրոն վարչական շրջանում՝ 49, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 1, Նոր Նորք վարչական շրջանում՝ 15, Նորք-Մարաշ

վարչական շրջանում՝ 19, Նուբարաշեն վարչական շրջանում՝ 6, Շենգավիթ վարչական շրջանում՝ 14, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 17:

**76. Կենդանաբանական այգու ցուցադրություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,746.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

**77. Կենդանաբանական այգու հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 526,389.0 հազար դրամ՝ նախատեսված 539,600.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.6%, որի շրջանակներում աշխատանքներ են տարվել վագրերի ազատավանդակի կառուցման, սիրամարգերի ազատավանդակը որպես կենդանաբանական այգու նոր մուտք վերակառուցելու, վարիների նոր կղզյակի կառուցման, նոր զոոկլինիկայի կառուցման ուղղությամբ, ինչպես նաև կենդանաբանական այգում նոր զբոսայգի կառուցելու ուղղությամբ:

**78. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 102,122.7 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ որն ուղղվել է թվով 5 կազմակերպությունների պահպանմանը:

**79. Թատերական ներկայացումներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 359,864.5 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

**80. Հուշարձանների վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 15,640.1 հազար դրամ՝ նախատեսված 15,700.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.6%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

**81. Քաղաքապետարանի աշխատանքների լուսաբանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 36,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրվել են հեռուստաընկերություններ, որոնք հաշվետու տարվա ընթացքում լուսաբանել են Երևանի քաղաքապետարանի աշխատանքները:



**82. Անդամակցության վճարներ ծրագրով** փաստացի ծախսը կազմել է 24,813.5 հազար դրամ՝ նախատեսված 25,932.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.7%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության, Մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի, Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի, «Եվրոպայի սպորտի մայրաքաղաք 2019» տիտղոսի համար թեկնածության, Հայաստանի համայնքների միության և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի անդամակցության վճարները:

**83. Նախադպրոցական ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,596,529.1 հազար դրամ՝ նախատեսված 7,661,043.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.2%, որի շրջանակներում փաստացի հաճախող երեխաթվի սկզբունքով ֆինանսավորվել է 160 մանկապարտեզ: 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը հաշվարկվել է 22.5 հազար դրամի չափով, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզի պահպանման ծախսերի համար ամսական հատկացվել է 650,0 հազար դրամ:

**84. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 180,184.7 հազար դրամ՝ նախատեսված 200,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.1%, որի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է թվով 1,084 մանկական զգեստապահարան, թվով 1,130 երկհարկանի մանկական մահճակալ և թվով 107 սառնարան, թվով 276 խոհանոցի պահարան, թվով 420 սննդի մշակման սեղան, թվով 149 խմորի մշակման սեղան, թվով 158 պատրաստի սննդի մշակման սեղան:

**85. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,487.4 հազար դրամ՝ նախատեսվածի չափով,

որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել է «Երևանի հ.175 դպրոց» ՊՈԱԿ-ը:

**86. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն և երեկոյան ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 14,577,645.7 հազար դրամ՝ նախատեսված 14,585,049.8 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 159 դպրոցները:

**87. Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,314,998.0 հազար դրամ՝ նախատեսված 2,315,797.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որից՝ որպես ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 56,541.6 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 2,258,456.4 հազար դրամը ուղղվել է թվով 68 երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների ֆինանսավորմանը:

**88. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 581,512.9 հազար դրամ՝ նախատեսված 611,744.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.1%, որի շրջանակներում վերանորոգվել են թվով 3 երաժշտական, թվով 9 արվեստի դպրոցներ և թվով 4 մարզադպրոցներ բոլոր վարչական շրջաններում համաչափ զարգացման սկզբունքին համապատասխան:

**89. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ)** փաստացի ծախսը կազմել է 7,980.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձեռնահատկությունները:

**90. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 162,709.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 24 երաժշտական և

արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող թվով 610 աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

**91. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 52,343.4 հազար դրամ՝ նախատեսված 65,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 79.9%, որի շրջանակներում շախմատի թվով 10 դպրոցների համար ձեռք է բերվել շախմատի խաղասեղան 2 աթոռով, շախմատի ժամացույց, շախմատի խաղաքարեր, երկաթյա պահարան, համակարգիչ, գրապահարան և այլ գույք, ինչպես նաև Երևան քաղաքի թվով 20 մարզադպրոցների համար ձեռք է բերվել բասկետբոլի, ֆուտբոլի, հանդբոլի և վոլեյբոլի գնդակ, բասկետբոլի, վոլեյբոլի և հանդբոլի ցանց, սուսեր, ծանրաձող, ընթշամարտի մարզագորգ ծածկոցով, գեղարվեստական մարմնամարզության գորգ և այլ մարզական գույք:

**92. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 525,075.9 հազար դրամ՝ նախատեսված 566,502.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.7%, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 31 մանկապարտեզներում:

**93. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել 16,310.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որի շրջանակներում իրականացվել են համագործակցություն Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների ուսուցիչների և աշակերտների եռօրյա այց Երևան՝ փորձի փոխանակման նպատակով, երկօրյա վերապատրաստում «Վորլդ Վիժնի» համագործակցությամբ Երևանի քաղաքապետարանի ներառական կրթություն իրականացնող դպրոցներում Իսրայելի նույնատիպ դպրոցների փորձի մասսայականացման նպատակով, Սեմինար «Ղեկավարման և կառավարման նորմատիվ ակտերը /նոր/ նախադպրոցական կրթության ոլորտում» թեմայով Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների տնօրենների համար, 24-րդ մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսում, «Ազգային Ժողովի գավաթի»

կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հորելյանական և այլ միջոցառումներ:

**94. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,277.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

**95. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,306.1 հազար դրամ՝ նախատեսված 6,598.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95,6%, որը հիմնականում ներառում է թվով 1170 երեխաների՝ հանգստի գոտի տեղափոխման և ճանապարհի սննդի ապահովման ծախսերը:

**96. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 25,838.0 հազար դրամ՝ նախատեսված 30,065.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.9%:

**97. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 538,177.7 հազար դրամ՝ նախատեսված 552,769.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.4%, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2015 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող անձանց, ինչպես նաև կազմակերպել են բարեգործական ճաշարաններ, մատուցվել են բաղնիքի ծառայություններ, տոնական և հիշատակի օրերին աջակցություն է ցուցաբերվել բնակչության համապատասխան խմբերին և այլն:

**98. Հասարակական կազմակերպություններին աջակցություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,146.6 հազար դրամ՝ նախատեսված 23,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 80.4%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 25 հասարակական կազմակերպությունների:

**99. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը

կազմել է 362,404.9 հազար դրամ՝ նախատեսված 364,421.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.4%: Բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 43-Ն որոշմամբ սահմանված կարգով:

**100. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 588,359.6 հազար դրամ՝ նախատեսված 675,432.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 87.1%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի թվով 9,728 աշխատողներ ապահովվել են սոցիալական փաթեթով:

**101. Առողջության ապահովագրություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 151,722.2 հազար դրամ՝ նախատեսված 154,572.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել թվով 2,929 մարդ, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, «Երևանտրանս» ՓԲԸ վարորդները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը և Երևանի ենթակայության թատրոնների և թանգարանների աշխատակիցները:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացվել է 5,147,091.4 հազար դրամ Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրին (պատվիրակված լիազորություններ)՝ Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 265-Ն որոշմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեն կատարվել է 516,817.2 հազար դրամ պակասուրդով նախատեսված 648,475.6 հազար դրամ պակասուրդի դիմաց: